տարուայ յուլիսին, Ինձ դրդեցին շնորհել ձեզ ս. Գէորգ Զօրավարի 3-րդ աստիճանի շքանշան։

Հաւատացած եմ, որ փորձուած քաջարի զօրքերն այսուհետև ևս իրանց քաջագործութիւններով նորանոր փայլուն էջեր կը բանան իրանց ռազմական կեանքի պատմութեան մէջ։

Զինչանելով ձեր անկուն ցանկութեան՝ նուիրելու ձեր ոյժերը ծանր աշխատանքներից քայքայուած ձեր առողջութեանը աւելի համապատասխանող աշխատանքի՝ ես խորին ցաւակցութեամբ ազատում եմ ձեզ Իմ փոխարքայի, կովկասեան զօրքերի ընդհանուր հրամանատարի և առամանի պարտականութիւններից և, անկեղծօրէն գնահատելով Հայրենիքին ու Գահին մատուցած ձեր ծառայութիւնները, նշանակում եմ ձեզ գտնուել Ինձ մօտ։

Ես խորապէս հաւատում եմ, որ բարդ պարտականութիւններից ազատութիւնը կը վերականգնէ ձեր ոյժերը, և դուք դեռ երկար օգտակար կը լինէք Ինձ և պետութեանը ձեր փորձառութեամբ և անկողմնապահ խորհուրդներով։

Իսկական վրայ Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրուած է՝

Խորապէս յարգող ձեզ և անկեղծօրէն շնորհապարտ՝

«ՆԻԿՈԼԱՅ»

Արքայական Կայան, 23 օգոստ. 1915 թ.

ՀՐԱԺԵՇՏԻ ՈՂՋՈՅՆ

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ Կոմս Վորոնցով-Դաշկովի

Աւելի քան 10 տարի առաջ ստանձնելով Կովկասի վարչութիւնը հասարակական տրամադրութիւնների խառն ժամանակ, ես ընակչութեանն ուղղած իմ գիմումի մէջ վստահութիւն էի յայտնել կովկասցիների հաւատարիմ հպատակութեան վերաբերմամբ դէպի Թագաւոր Կայսրը, որի համար տեղական բոլոր ազգութիւնները հաւատարա-

պէս մօտ են, Թանկագին. վստահութիւն էի յայտնել նմանապէս, թէ Հնարաւոր պիտի լինի լիակատար խաղաղութիւն մտցնել երկրի փոթորկուած կեանքի մէջ, յուսալով ժողովրդի խոհականութեան և բնակչութեան բարեմիտ մասի աջակցութեան վրայ՝ առանց կրօնների և ազգութիւնների խտրութեան։ Այս յոյսն ինձ չխաբեց, և Կովկասի ազգբնակութիւնը դէպի ինքն արտայայտած վստահութեանս արձագանք տուեց փոխադարձ վստահութեամբ։ Շնորհիւ այս բանի ինձ յաջողուեց բաւական շուտով կատարելապէս խաղաղեցնել երկիրը, որով Հնարաւոր դարձաւ նրա խաղաղ և արդիւնաւէտ զարգացման համար հետզհետէ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու։ Դժբաղդաբար, այս ուղղութեամբ ինձ չյաջողուեց վերջնական վախճանի հասցնել իմ բոլոր մտադրութիւնները։ Կովկասում հաստատուն հողաշինարարութեան միջոցով մասնաւոր սեփականութիւն սահմանելու, զեմստւային հաստատութիւններ մտցնելու, դատարանը վերակազմելու, բարձրագոյն դպրոց հիմնելու, ինչպէս և Անդրկովկասի կենտրոն Թիֆլիսը՝ Ռուսաստանի սրտի հետ Կովկասեան գլխաւոր լեռնաշղթայի վրայով երկաթուղային ծգով միացնելու նկատմամբ իմ ունեցած աշխատանքներն անաւարտ մնացին, գլխաւորապէս մեր հայրենիքին վիճակուած ծանր պատերազմի պատճառով։ Սակայն ես հաստատ յոյս ունիմ, որ Կովկասի ազգաբնակութիւնը ոչ հեռու ապագայում, պատերազմի փոթորիկն անցնելուց յետոյ, ականատես կը լինի երկրի համար կենսական կարևորութիւն ունեցող այդ միջոցների իրագործմանը։

Այս յուսով, ցաւ ի սիրտ, հեռանալով իմ Թանկագին Կովկասից, ես պահանջ եմ զգում իմ հրաժեշտի ողջոյնն ուղղելու նրա բազմացեղ բնակչութեան բոլոր ազգութիւններին և բոլոր խաւերին։ Ի սրտէ շնորհակալ եմ այն բոլոր անձնաւորութիւններից և հաստատութիւններից որ շատ անգամ ինձ վստահութեան բարի տրամադրութիւն են ցոյց տուել, որ երբէք չեմ մոռանալ, և անկեղծօրէն մաղթում եմ այս օրհնուած երկրին իր բնական, հոգեկան և ֆիզիքական ոյժերի ու միջոցների կատարեալ բարգաւաճում։

Գեներալ-ադիւտանտ Կոմս Վօրօնցով-Դաշկով։